



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

6

ԳԼՈՒԽ Գ ՎԱՍՆ ՀԱՐՅ ՎԱՆԻՅ ԵՒ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՅ

Կարգ ոգոց դատաստանաց եւ հրահանգ բարեաց հարանց եւ եղբարց ի սրբոյն Սահակայ եւ ի սրբոյն Բարսղէ եղեալ են: Բայց չափաւորապէս եւ մարմնատեսակ օրինաց դատաստանի գնշանակս յաւելում հարկաւորապէս, զի ոչ այժմ ամենեցուն է ըստ հրամանի նորին վարիլ: Նաեւ ոչ հեռի ի դիտաւորութենէ սահմանի սրբոյն ինչ ընդ միտս ածել իշխենք, այլ յարմար նորին վարիմք շաղօք: Եւ արդ, այսպէս սկսցուք: Ջի թագաւորաց եւ իշխանաց, միանգամայն եւ ամենայն հաւատացելոց շինել վանս ոչ յաղագս մարմնաւոր ինչ յուսոյ է, այլ մանաւանդ՝ հոգեւոր, յաղագս այնորիկ ոչ պարտի ժառանգ լինել: Ջի որ յառաջնումն հայր եղեւ եղբարց, թէ յիւր շինեալ տեղի եղբարց եւ թէ յայլոց, եւ բարիոք առաջնորդէ, անդատաստան է փոխել, ապա թէ հակառակ ինչ գործէ, երկու եւ երեք վկայիք հարկաւոր է փոխել: Եթէ դիցեն վանաց հայրպետ, յառաջ գամենայն ինչսն վանացն գրով ի նա տան, նոյնն եւ զիւր ինչսն անցուցէ, որ թէ պատահի նմա ելանել ի վանացն, զիւրն առցէ, եւ զոր յանուն եկեղեցոյն տուեալ եղեւ, անդէն թողցէ: Իսկ զկնի մահու հարց մի՛ լիցի իբր ժառանգութիւն առնուլ ազգատոհմից, միայն եթէ պատահի վարուքն բարի եւ հաճութեամբ եղբարց՝ նստցի, ըստ այնմ՝ փոխանակ հարց եղիցին որդիք: Ապա թէ չիցէ որ յազգատոհմից հօրն, զայլ որ իմաստուն յեղբարցն ընտրեսցեն հայր վանացն: Իշխանաց ոչ է օրէն կաշառօք հայր դնել վանաց առանց կամաց եղբարց: Եւ եպիսկոպոսունք եղիցին այդոցիկ կարգիչք եւ այն իրաւամբք եւ ոչ կաշառօք: Եւ



քանզի են ի վանս գործ քան գգործս ասելի աշխատութեամբ, եւ ամենեցուն յոյս եւ հատուցանող Քրիստոս է, բայց եթէ կարճամիտ ոք հանդիպի ի գործաւորսն, տացի նմա առաւել վարձ վասն ծանրութեան գործոյն, զի մի՛ ի պատճառս այնմիկ նուագութիւն եղբարցն լիցի: Եւ թէ այդոցիկ տրտունջ իցէ, դատաստան լիցի տրտնջողին առնել գգործս: Եւ զայս արտաքոյ կանոնի կամաց սրբոյն Բարսղի եղաք կարճամտելոցն աղագաւ: Բայց զանօթ ինչ գործելեաց եթէ վայրապար վնասիցեն, նոքա վճարիցեն, իսկ եթէ պատահմամբ՝ ոչ վճարեսցեն:

ԳԼՈՒԽ Դ ՎԱՄՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Եւ վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին եւ Նոր կատակարանաց եւ կանոնական հրամանաց: Յերկուց եւ յերկից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թէ եւ պատահի միոյ վարդապետի աշակերտի: Եւ թէ զկամս եպիսկոպոսի եւ կամ առ առաւել զհայրապետի ընդ իւրեանս ունիցին, նաեւ զիշխանի, բարիոք եւս գործիցեն, ապա թէ ոչ՝ ըստ Օրինացն յերկուց եւ յերկից վկայից հաստատեսցի: Իսկ ի միոջէ զկարգեալսն եւ զանձամբ եկեալսն լոնցուցեն: Այլ ըստ օրինացն զկարգեալսն պատուել, իբրոյ զի երկրորդ է ըստ մարգարէական շնորհին, զի աշխատութեամբ առաքելոցն հաղորդի եւ շնորհօք՝ մարգարէիցն, ուստի եւ բանիւ ընտրեալ կոչի: Իսկ նախակրթեալք ի միոջէ վարդապետէ եւ ամբարտաւանեալք՝ յայլմէ առնուցուն պատիւ հրամանի՝ արհամարհելով զիւրն, իրաւունք լիցին դատաստանի՝ ի նմանէ զուսեալն երկրորդել, եւ կամ զղջացեալ արժանաւոր ապաշխարութեամբ՝ իւրոյն հրամանաւ վերստին ուղղեսցի: Եւ կոչողն առանց կամաց իւրոյն վարդապետի, հատուցէ պատիժս՝ անգեղջ եղեալ, եւ զղջացեալ ի դէպ ապաշաւանօք՝ թողութիւն առցէ յայնմանէ, զոր քամահեացն՝ զնորայն առանց նորին կամաց կոչել յառաջ: Եւ թէ պատահեսցի վարդապետի զոք կապել բանիւն Աստուծոյ յաշխարհականաց, կամ ի վանականաց, կամ յեկեղեցականաց, այլ ոք վարդապետ մի՛ լուծցէ. թէ ախտաւոր իցէ եւ կամ տգիտութեամբ՝ միջնորդ լինել ուղղել զիրաւացին՝ անեպեր, առանց հակառակելոյ, եւ թէ ոչ անսայցէ՝ կապեսցի փոխանակ կապելոյն, մինչեւ զղջասցի: Ապա թէ իրաւացի իցէ, եւ ոչ անսայցէ այլ ոք նմա, դատաստան լիցի՝ եւ նա ընդ կապելոյն կապիլ, մինչեւ զղջասցի՝ եթէ ի տգիտաց եւ յամբարտաւանից իցէ, եւ թէ ի վկայելոց՝ առաջի նորա զպատճառ կապանացն ցուցցէ եւ ի նա թողեալ զպատասխանին՝ անպարսաւ լիցի: Եթէ

պատահի ի միում եղբայրանոցի երկու լինել վարդապետ եւ կամ ասելի եւս, զմի, որ յառաջադէմ իցէ, ինքեանց գլուխ եւ ասագ կոչեսցեն՝ ըստ հրամանի առաջնորդաց, զի բարեկարգութիւն եւ ի նոսա իցէ, եւ մի՛ պատճառ տայցեն գայթակորութեան: Եւ թէ իւրաքանչիւրքն գոյգ կարգիցին, զոր չէ հնար համեմատել զշնորհսն, առաւելեալն տարցի գպատիւն, եւ ըստ հրամանի նորա այլքն զարդարեսցեն զտօնս բանիւ, նաեւ գայլ եւս հարկս բանից: Եւ եթէ որ ընդվզեալ լուծցէ զսահման կարգին, դատաստան լիցի միաբանութեամբ եղբարցն՝ ելանել նմա: Իսկ զաշակերտս միմեանց, առանց գրոյ եւ կամաց ինքեանց, մի՛ առցեն. ապա թէ քամահելով առցէ, դատաստան լիցի՝ որքան ուսեալ ի նմանէ իցէ, վերստին նստցի եւ ուսուցէ, եւ կամ գոջացեալ՝ կամօք նորա կացցէ, եւ նա ընկալցի: Իրաւունք են ասագ վարդապետի ընդ կաթողիկոսի եւ ընդ եպիսկոպոսի ի վիճակ ելանել ըստ նոցա կամաց, եւ կամ այլ որ՝ ըստ կամաց երկոցունց, զի մի՛ արտաքոյ կանոնաց յեպիսկոպոսէ գործիցի ինչ, զի եւ եպիսկոպոսն միաբանութեամբ վարդապետին զիւրաքանչիւր կարգն գործիցէ: Եւ թէ այսմ ոչ անսայցէ որ ի վարդապետացն, ըստ դատաստանի եպիսկոպոսին եւ ասագ վարդապետին ելցէ ի միաբանութենէ նոցա: Այլ գայնոսիկ, որ հանդերձեալ իցեն կոչիլ յաստիճան հրամանի, զհամար ուսման արժան է պահանջել, թէ ու՞ր եւ յումմէ՞ գտառս զիւրաքանչիւր ընթերցաւ ուսմամբ: Եւ այս առ այնք լիցի, զոր ի բազումս շրջեալ՝ բազում վնասս խակութեամբն գործիցեն: Եւ այդ իրաւունք նոցա կացցէ, բայց համօրէն ընտրութիւն լիցի: Մի՛ ինքեանց կամօք գայցեն յառաջ, այլ գառաջադիմութիւն նոցա, եւ զերկիւղ, եւ զբարիոք շինել զոգիս զինքեանց, եւ գայլոց տեսեալ՝ հարկաւորիցեն, շարժեալ հոգով՝ անստգիտ մտացն խղճիւ կոչիցին ի սպասաւորութիւն բանին: Այլ վաղվաղկոտացն իրաւունք լիցի եւ այնոցիկ, որ գայլս աղաչիցեն ի պատիւ ելանել բանին, լոել մինչեւ յախտիցն նախ բժշկիցին, զի մի՛ հիւանդք հոգով զբազումս ախտացուցանեն. եւ այդ իրաւացի է դատաստան նոցա: Այլ ոչ անվիճակս գնոսա իրաւացի է յամենայն տեղիս արձակել, այլ եթէ ի գաւառի իւրեանց կամիցին եւ թէ յայլում պանդխտանալ, եպիսկոպոսաց միաբանութեամբ եւ հրամանաւ լիցին՝ շրջելով բարեկարգութեամբ. այդոքիկ վկայելոցն լիցին: Իսկ զաննշան շրջողս, եւ զօշաքաղս, եւ որք կամիցին ցուցանել զանձինս զհտունս առ ամենայն որ, մշակք եղեալք որովայնի եւ այլոց ախտից, բանավաճառք եւ վկայելոց պարսաւադէտք, գայնպիսիսն լոեցուցանեն իրաւացի դատաստանաւ եւ առցեն ի նոցանէ զգաւագանն եւ տացեն ցուպ շրջողութեան: Եւ թէ պատահի

վարդապետի երթալ հիւրութեամբ յայլ վայրս, ուր վարդապետ իցէ, մի՛ առանց մեծարանաց վարդապետի տեղոյն խօսեսցի, այլ զի նախ նա ըստ տեղոյն սովորութեան ընդ եղբարսն խօսեսցի, եւ ապա ըստ ամենեցուն կամաց հարկի՝ հիւրն: Եւ թէ վկայեալ ոք հիւրն իցէ, եւ բնականն նախ նմա կամիցի, ըստ կամաց նորա խօսեսցի. սակայն մի՛ յաճախեսցէ եւ գասպնշականն ամաշեցուցէ եւ յիւրոցն գնա քամահել տացէ: Ապա թէ գասիմանս գայս լուծցէ եւ յանդգնութեամբ անաղերս խօսեսցի, դատաստան լիցի՝ անպատիւ գնա ի բաց դարձուցանել:

ԳԼՈՒԽ Ե ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՏԱՍՏԱՆԱ

Եւ մի՛ լիցի քահանայից ժառանգութիւն առնել զժողովուրդն Քրիստոսի, որպէս տեսանենք, զի եւ դստերաց ի բաժինս տան ժառանգութեան զգինս արեանն Քրիստոսի: Պարտ է եպիսկոպոսին յայնպիսոյն առնուլ զհօտն Քրիստոսի եւ տալ ի ձեռս այնոցիկ, որ Տեառն գտէրունիսն հովուեսցեն, եւ պատասխանել նոցա իրաւամբք, թէ զոր սրով քո գերեցեր եւ գնով քո գնեցեր, գնոսա կալցես քեզ ժառանգութիւն եւ մի՛ զշարշարանօքն Քրիստոսի զգնեալսն եւ զփրկեալսն. եւ թէ յանդգնի՝ լռեցուցանել եւ ի քահանայութենէն:

Եւ թէ պատահի ժողովրդականացն փոփոխել բնակութեամբ թաղէ ի թաղ, այն իրիցուն լիցի ծուխ, յոր թաղ բնակեսցի եւ մի՛ առաջնոյն, քանզի մի է օրինակ հովութեան ընդ ամենայն տեղիս ուղղափառաց: Չի են ոմանք յազգէ քահանայից աշխարհականք, զի յորժամ մեռանի երէցն, նա իւրեանք ուտեն զծուխ, եւ զմուխ, եւ զմոխիր կրակացն եւ իւրեանց դրան երէց դնեն. եւ այս մեծ անիրաւութիւն է: Արդ, պարտ է այնպիսեացն, թէ սարկաւագունք իցեն՝ քահանայ՝ լինել, եւ թէ աշխարհականք՝ խափանեսցին ի ծխի ուտելոյ. եւ թէ յանդգնին՝ նզովեսցին յեպիսկոպոսէն, մինչեւ զղշասցին:

Իսկ քահանայից վանականաց ոչ է պարտ ծխակերութիւն առնել: Աշխարհական ոք, թէ մատաղ առնէ, իւրում քահանային տացէ զերին եւ զմորթն եւ մի՛ վասն չարութեան այլ քահանայի տացէ. եւ թէ յանդգնի՝ կրկին առցէ եպիսկոպոսն ի նմանէ եւ տացէ յիւր քահանային: Եւ եթէ ժողովրդական ոք նախատէ զքահանայ կամ հարկանէ, արժան է հատանել զձեռն, որով եհարն, եւ կամ գնեսցէ զձեռն իւր յեպիսկոպոսէն եւ բազում ապաշխարութեամբ թողութիւն արասցէ նմա: Քահանայ, թէ վասն անձին խնդրելոյ վրէժ բանադրէ զոք, զինչ եւ իցէ պատճառ,

զանձն իւր դատապարտէ. եւ գղջացեալ յետոյ պարտ է նմա եպիսկոպոսին խրատով ապաշխարել: Եթէ զոր կապեացն ոչ արձակեսցէ, կապեսցէ զնա եպիսկոպոսն, մինչեւ գղջացի եւ արձակեսցէ զոր կապեացն: Բայց սակայն որ կապեցան, թէ իրաւ է, թէ անիրաւ, ընդ կապանօք է, մինչեւ գղջացեալ թողցէ: